«ՇԻՐԱԿԻ ՈՒՍՈՒՑԻՉՆԵՐԻ ՄԻՈՒԹՅՈՒՆ» ԳԻՏԱԿՐԹԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆ ՀԿ

ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

[«Կրթադաստիարակչական ժամանակակից խնդիրներն աշխարհագրության դասընթացների համատեքստում»]

ԿԱՏԱՐՈՂ: *Այգաբացի միջնակարգ դպրոցի ուսուցիչ՝ Մանվել Բարսեղյան*

ԳԻՏԱԿԱՆ ՂԵԿԱՎԱՐ: *Աշխարհագրական գիտությունների թեկնածու-դոցենտ՝ Արմեն Ներսիսյան*

ԳՅՈՒՄՐԻ 2022

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Ներածություն.....2

ԳԼՈՒԽ 1.Կրթադաստիարակչական ժամանակակից հիմնախնդիրները.....4

1.1 Հիմնախնդրի էությունը և սկզբնաղբյուրները.....4

ԳԼՈՒԽ 2. Կրթադաստիարակչական հիմնախնդիրները աշխարհագրության դասավանդման համատեքստում.....8

2.1 Աշխարհագրության՝ որպես գիտությունների համակարգի, առաջացումը, դասավանդումը աշխարհում և դասավանդման խնդիրները.....8

2.2 Հիմնախնդրի էությունը հայաստանյան դպրոցում.....15

Եզրակացություններ.....21

Գրականության ցանկ.....23

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Ժամանակակից արագ փոփոխվող աշխարհում, որտեղ դիտվում է արժեքային ճգնաժամ, լուրջ հիմնախնդիր է դարձել կրթադաստիարակչական խնդիրները։ Աշխարհի երկրների ճնշող մեծամասնությունում կրթությունը, դա գործիք է պետության ձեռքում իր նպատակներին հասնելու համար։ Ժամանակակից աշխարհում, որտեղ առավելությունը տրվում է գլոբալիստական գաղափարախոսություններին, կրթությունը ստանում է նոր երանգներ, իսկ նրա առջև դրվում են բոլորովին այլ նպատակներ՝ մասնավորապես սպասարկել գլոբալիստական շահերը, որոնք բոլորովին չեն համընկանում պետությունների, առավել ևս ազգային պետությունների շահերին, հետևաբար արհեստականորեն ստեղծվում են խնդիրներ կրթադաստիարակչական ոլորտում՝ հիմնական նպատակներից շեղելու համար։ Կրթական ոլորտը գտնվում է անընդհատ շարժման մեջ, շատ արագ հակազդում է արտաքին փոփոխություններին, հարմարվում դրանց փոփոխական պահանջմունքներին և ակտիվորեն ազդում նրանց վիճակի վրա։ Այս ամենը թույլ է տալիս կրթությունը համարել ժամանակակից առաջընթացի կարևորագույն ռեսուրս։

Մեր հետազոտության օբյեկտը՝ **«կրթադաստիարակչական պրոցեսը»** ներառվում է մանկավարժական գիտությունների համակարգի արագ զարգացող և երբեք իր արդիականությունը չկորցնող ճյուղերից մեկի՝ դասավանդման մեթոդիկայի տիրույթում:

Նկատենք, որ հիմնախնդիրը, ներկայումս, հասարակության գիտակից շերտին հուզող ամենաարդիական հիմնախնդիրներից մեկն է, քանզի այն կերտում է պետության և ազգի ապագան։

Աշխատանքի գլխավոր նպատակն է **կանխատեսել ժամանակակից աշխարհաքաղաքական գործընթացների հնարավոր ազդեցությունը, կրթադաստիարակչական պրոցեսի վրա լոկալ առումով և մարդկային հասարակության հնարավոր զարգացման ուղղության վրա՝ գլոբալ առումով։**

Համաձայն առաջադրված նպատակի դրվել և լուծվել են հետևյալ հետազոտական **խնդիրները՝**

- Բացահայտել հիմնախնդրի ակունքները
- Պարզել դրա բնածին, կամ արհեստածին լինելը
- Ուսումնասիրել խնդրի առկայության մակարդակը Հայաստանի Հանրապետությունում
- Առաջարկել լուծման մեխանիզմներ

Հետազոտական խնդիրների լուծման համար օգտվել ենք, ինչպես համագիտական, այնպես էլ կոնկրետ գիտական մեթոդաբանությունից: Մասնավորապես, գիտական աղբյուրների մասնագիտական վերլուծություն՝ արդյունքների տեսական ընդհանրացման միջոցով, հետազոտվող օբյեկտների դիտարկում՝ համեմատա-աշխարհագրական վերլուծության շնորհիվ:

Աշխատանքում առաջադրված հետազոտական խնդիրների լուծման հերթականությունն էլ պայմանավորում է սույն աշխատանքի կառուցվածքը:

Աշխատանքը բաղկացած է երկու գլուխներից, որոնցից յուրաքանչյուրն էլ իր հերթին բաղկացած է ենթագլուխներից և եզրակացությունից:

ԳԼՈՒԽ 1

ԿՐԹԱԴԱՍՏԻԱՐԱԿՉԱԿԱՆ ԺԱՄԱՆԱԿԱԿԻՑ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐԸ

1.1 Էությունը և սկզբնաղբյուրները

Այսօր աշխարհում գոյություն ունեն բազմաթիվ հիմնախնդիրներ, սակայն դրանց լուծումը պետք է սկսել կրթության և դաստիարակության խնդիրներից, քչերը սակայն գիտեն այդ հիմնախնդիրների, առավել ևս դրանց լուծումների մասին: Եթե այս հիմնախնդիրը չլուծվի, ապա իմաստ չկա սկսել մնացած հիմնախնդիրների լուծումը, քանզի դրանք կկրեն ժամանակավոր բնույթ և որոշակի ժամանակ անց նորից կվերադառնան: Մարդու բանականությունը, մտքերը և զգացմունքները այն գլխավոր թիրախներն են, որոնց վրա ազդում է կրթությունը:

Այսօր մանկավարժական խնդիրներից գլխավորներն են սովորողների ստեղծագործական և տրամաբանական մտածողության զարգացումը, որտեղ շատ կարժևորվի աշխարհագրության դերը: Այս խնդիրը լուծելը բավականին բարդ առաջադրանք է դարձել մանկավարժների համար, դրա համար էլ ուսուցիչը պետք է ընտրի ուսուցման ճիշտ մեթոդներ: Հոգեբանները պնդում են, որ մարդու կարողությունները զարգանում են ուսուցման գործընթացում, հատկապես եթե օգտագործում են ուսուցման ակտիվ մեթոդներ:[1]

Ժամանակակից կրթության հիմնական նպատակներն են անձի ինտելեկտուալ և բարոյական զարգացումը, քննադատական և ստեղծագործական մտածողության զարգացումը, ինֆորմացիայի հետ աշխատանքի կարողության ձևավորումը: Սակայն այս նպատակները ենթարկվել են վերաձևակերպումների կապված ժամանակակից աշխարհում ընթացող գործընթացների հետ, մասնավորապես **«բարոյական զարգացում»** եզրույթի տակ հասկացվում է տրամաբանորեն լրիվ հակառակը, քան տասնամյակներ առաջ, քան իրականում պետք է լինի, ինչը չի բխում **«մարդկային հասարակության»** շահերից: Ինֆորմացիայի առումով, որը ստանում է սովորողը, նույնպես ամեն ինչ հարթ չէ: Ժամանակակից ինֆորմացիոն դարաշրջանում, որտեղ կա տեղեկատվություն անսպառ հոսք, ճիշտ մշակել, առավել ևս վերլուծել,

[1] Д. Е. Васильевна «Использование современных образовательных технологий как средство интеллектуального развития учащихся на уроках географии» Курск 2021г.

կարողանում են ոչ բոլորը, հետևաբար ուսումնական հաստատությունում կա դրանք մշակելու հնարների ուսուցման անհրաժեշտություն, որը շատ հաճախ չի կատարվում բազմաթիվ օբկեկտիվ և սուբյեկտիվ պատճառներով։

Ժամանակակից կրթադաստիարակչական հիմնախնդիրները բազմաթիվ են , սակայն կարելի է դրանցից առանձնացնել գլխավորները.

1. Հիմնախնդիրները չեն դիտարկվում գլոբալ հիմնախնդիրների համատեքստում
2. Բյուրոկրատիական հիմնախնդիր
3. Ուսուցման գործընթացի ցածր մակարդակ
4. Դաստիարակչական ֆունկցիայի աստիճանաբար դուս մղում ուսուցման գործընթացից
5. Մասնագիտական սխալներ, անճշտություններ և անհամապատասխանություններ ուսումնական նյութերում, ձեռնարկներում և դասագրքերում
6. Ուսումնական, որոշ առարկաների վերաիմաստավորման անհրաժեշտություն
7. Կրթություն ստանալու բազմաթիվ և անկառավարելի աղբյուրների առկայություն
8. Կրթադաստիարակչական գործընթացի մասնակիցների պատրաստման և մոտիվացման խնդիր
9. Կրթության առաջնային նպատակների կորուստ
10. Աստիճանական անցում դեպի հեռավար կրթության՝ որպես ուսուցման հիմնական ձևի

Ժամանակակից կրթական հիմնախնդիրները պետք է դիտարկել գլոբալ հիմնախնդիրների կոնտեքստում։ Համակարգի ցանկացած բաղադրիչ անքակտելիորեն կապված մնացած բաղադրիչների հետ, և եթե կա խնդիր կապված մեկ բաղադրիչի հետ, ապա այն անպայման կազդի համակարգի մյուս բաղադրիչների վրա և հակառակը, եթե համակարգը գտնվում է ճգնաժամի մեջ հնարավոր չէ, որ նրա առանձին բաղադրիչները կարողանան նորմալ գործել։ Կրթական խնդիրներ կան բոլոր երկրներում, սակայն դրանք շատ հաճախ չեն դիտարկում, որպես գլոբալ ճգնաժամի ցուցիչ և արդյունք միաժամանակ, այլ դիտվում են, որպես լոկալ

հիմնախնդիր ինչի հետևանքով, կամ լուծում չեն ստանում, կամ էլ լուծումները կրում են ժամանակավոր բնույթ։

Բյուրոկրատիա երևույթը ներկայումս թափանցել է բոլոր ոլորտներ, և կրթական հաստատությունները բացառություն չեն կազմում։ Պետք է հասկանալ, որ բյուրոկրատիան վերջին տասնամյակում նույնպես ենթարկվել է «թվայնացման դարաշրջանի» տենդեցներին և սկզբնական կոպիտ «թղթաբանություն» հասկացության փոխարինել է այլ երևույթ, սակայն դրանից նրա իմաստը չի փոփոխվել, ուղղակի բոլոր փաստաթղթերը վարվում են էլեկտրոնային եղանակով։

Դպրոցը տալիս է ոչ միայն գիտելիք, այլև կրթում է անձնավորություն։ Ժամանակակից դպրոցում այդ ֆունկցիան կամաց-կամաց հետին պլան է մղվում և դպրոցը դիտարկվում է, որպես գիտելիք ստանալու վայր, ապագա մասնագետ պատրաստող կառույց, ով ապագայում կկարողանա ապահովել իր ապագան, ուշադրություն չդարձնելով հասարակությանը տված անդամի մարդկային որակների վրա։ Մասնագիտական սխալները, անճշտությունները և վիճելի հարցերը ժամանակակից կրթության կարևոր խնդիրներից է հանդիսանում, քանի որ դրանից տուժում է կրթության որակը։ Անհրաժեշտություն կա դասավանդվող առարկաների մեծ մասի վերաիմաստավորման խնդիրների վեկտորների ուղղում դեպի ժամանակակից հիմնախնդիրների լուծմանը։

Ներկայումս փորձ է արվում «ստանդարտացնել» կրթությունը, այսինքն ստեղծել մեկ միասնական համաշխարհային կրթական մոդել, որով պետք առաջնորդվեն բոլոր երկրները, որը կձևավորի մեկ միասնական գաղափարախոսություն, մեկ միասնական լեզվամտածողություն, աշխարհայացք, մշակույթային, կրթական և բարոյական արժեքներ՝ այսինքն մեկ միասնական քաղաքակրթություն, մեկ միասնական ազգ։ Իսկ քանի որ աշխարհը բազմազան է իր ամեն ինչով այստեղ առաջանում է դիմադրություն վերոնշյալ պլաններին և առաջ է գալիս ճգնաժամ, հետևաբար կրթական համակարգի ճգնաժամային վիճակը արհեստածին է։

Կրթական հիմնախնդիրներից համեմատաբար նոր է անցումը աստիճանաբար ավանդական կրթական մոդելից, դեպի հառավար, առցանց կրթության։ Ժամանակակից մասնագետների մեծ մասը, իրենց հետազոտություններով նշում են դրա առավելությունները և ապացուցում նրա կարևորությունը և ներկայացնում՝

ապագայում որպես այլընտրանք չունեցող ուսուցման ձև։ Սակայն քչերն են բարձրաձայնում դրա թերությունների և բացասական կողմերի մասին։ Ամենավտանգավոր հետևանքը, որ կարող է թողնել նման ուսուցման ձևը, դա **սոցիալական հաղորդակցության կարողությունների կորուստն է**, որի արդյունքում երեխաները կկորցնեն իրենց հասակակիցների և ընդհանրապես այլ մարդկանց հետ շփման կարողությունը։

ԳԼՈՒԽ 2

ԿՐԹԱԴԱՍՏԻԱՐԱԿՉԱԿԱՆ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐԸ ԱՇԽԱՐՀԱԳՐՈՒԹՅԱՆ ԴԱՍԱՎԱՆԴՄԱՆ ՀԱՄԱՏԵՔՍՏՈՒՄ

2.1 Աշխարհագրության, որպես գիտությունների համակարգի, առաջացումը, դասավանդումը աշխարհում և դասավանդման խնդիրները:

Աշխարհագրությունը ուսումնական հաստատություններում դասավանդվող հնագույն գիտություններից է: Դպրոցական աշխարհագրությունը ուղղված է սովորողների տրամաբանության և ինքնիրացման պոտենցիալի զարգացմանը: Այն օգնում է աշակերտների բազմակողմանի զարգացվածությանը, հասարակությունում տեղի ունեցող երևույթների և իրադարձությունների օբյեկտիվ գնահատմանը և խնդիրներին ստեղծագործ մոտենալուն: Էրատոսթենեսի և Պտղոմեոսի ժամանակներից աշխարհագրությունը ծառայում է մարդկությանը, օգնում նրան ապրել և հասկանալ այն աշխարհը, որտեղ նա ապրում է: Աշխարհագրությունը ծագել է շատ հին ժամանակներում կապված մարդու պրակտիկ գործունեության հետ և հանդես է եկել, որպես նկարագրական գիտություն: Ներկայումս աշխարհագրությունը գիտությունների համակարգ է, որոնք զբաղվում են աշխարհագրական օրենքների հայտնագործմամբ, ուսումնասիրությամբ և կանխատեսմամբ:

Աշխարհագրության արժանիքը կայանում է նրանում, որ նա հանդիսանում է աշխարհայազք ձևավորող գիտություն, նա տալիս է համակարգային պատկերացում Երկիր մոլորակի մասին՝ որպես «մարդկանց մոլորակի»: Նա, նաև միակ առարկան է, որը ծանոթացնում է սովորողներին տարածքային մոտեցմանը, որպես գիտական ուսումնասիրության հատուկ մեթոդի:[2] Այս առարկան կարելի է դասել, ինչպես այն դասական առարկաների շարքը, որոնց վրա կա պատասխանատվություն դաստիարակել մարդասիրություն, այլև նրանց, որոնք դաստիարակում են հայրենիքի նկատմամբ սեր և սոցիալական պատասխանատվություն:

[2] К. Пинчук “Современные проблемы географического образования в школе” МПГУ Москва 2011г

Աշխարհագրությունը զբաղեցնում է յուրահատուկ տեղ գիտությունների համակարգում, որը կապ է հաստատում սոցիալական, հումանիտար, բնական և տեխնիկական գիտությունների միջև:

ԳՏՀ-ի դարաշրջանի զարգացման սկզբի հետ աշխարհագրությունը, ինչպես մի քանի այլ առարկաներ, սկսեց կորցնել իր արդիականությունը: Սակայն վերջին տարիներին աշխարհագրությունը **կարող է** մուտք գործել իր **«Վերածննդի դարաշրջան»:** Հասարակության մոտ առաջ է գալիս այն գիտակցումը, որ դա այն միակ առարկան է, որը միաժամանակ դասվում է բնագիտական և հումանիտար առարկաների շարքին, հետևաբար ընդգրկում է «Շրջակա միջավայր-մարդ-հասարակություն» շղթան ամբողջությամբ, այն միակ առարկան է, որը մարդկանց մոտ ձևավորում է մեր մոլորակի մասին համալիր աշխարհայացք:

Ցավոք աշխարհագրությունը/թե դպրոցական, և թե բուհական/, ինչպես և կրթական ամբողջ համակարգը իր լավ ժամանակները չի ապրում, իսկ աշխարհագրական գիտելիքների պակասը բերում է ոչ միայն բնապահպանական խնդիրների, այլև քաղաքական և ժողովրդագրական ճգնաժամի:

Այս ամենից էլ հետևում է աշխարհագրության դասավանդման գլխավոր նպատակը՝ սովորողի գիտակցության մեջ ձևավորել իր բնակավայրի, հայրենիքի և աշխարհի մասին օբյեկտիվ պատկեր և սովորեցնել դրանք կիրառել առօրյա կյանքում:

Աշխարհի տարբեր երկրներում՝ ելնելով իր առաջ դրած գերակա խնդիրներից, այս նպատակը մի փոքր այլ է: Օրինակ Իսրայելում կտրուկ գերակշռում է հայրենասիրական գաղափարը, բազմազգ երկրներում, ինչպիսիք են ՌԴ-ն և Հնդկաստանը՝ ազգերի եղբայրության գաղափարը, ԱՄՆ-ում՝ աշխարհը կառավարելու իրավունքը իրենց տրված լինելու գաղափարը: Չինաստանում, օրինակ աշխարհագրության դասավանդման նպատակը մեկն է՝ ամրապնդել սովորողի մոտ իր «փոքր» և «մեծ» հայրենիքների նկատմամբ սերը:

Ինչ վերաբերում է «Աշխարհագրություն» առարկայի բովանդակությանը դպրոցներում, ապա նշանավոր անգլիացի աշխարհագրագետ Նորման Գրեյվզը եկել է այն եզրակացությանը, որ ամբողջ աշխարհում աշխարհագրության դասավանդման զարգացումը անցել է 3 փուլեր.

Առաջին փուլին նա անվանել է «հանրագիտարանային», ըստ նրա այս փուլում սովորողը ստանում է բազմաթիվ տեսական ինֆորմացիա աշխարհի մասին: Այս փուլում գլխավոր շեշտը դրվում է ինֆորմացիայի ընկալման և դասակարգման կարողությունների ձեռքբերման վրա: Այս փուլը բնորոշ է եղել Եվրոպային 19-րդ դարում, իսկ Եվրոպայից դուրս այն շարունակվում է մի շարք երկրներում:

Երկրորդ փուլում դասավանդման գլխավոր նպատակը հանդիսանում է բնության և հասարակության փոխհարաբերություններում խնդիրների ուսումնասիրումը: Այստեղ գլխավոր շեշտը դրվում է բնություն-հասարակություն փոխհարաբերությունների վերաբերյալ աշակերտի կարծիքի ձևավորման վրա:

Երրորդ փուլը բնորոշվում է աշխարհագրության և հումանիտար գիտությունների տարալուծմամբ՝ որպես համալիր գիտության առաջացմամբ: Այստեղ շեշտադրումը կատարվում է պրոբլեմային ուսուցման վրա: [3]

Դպրոցական աշխարհագրությունը համեմատաբար բարձր մակարդակի վրա է գտնվում այն երկրներում, որոնք կարողացել են որոշ չափով պահպանել իրենց դիրքերը: Դրա վառ օրինակն են հանդիսանում ԱՄՆ-ը, ՌԴ-ն, Արևմտյան Եվրոպայի երկրները և Ճապոնիան:

ԱՄՆ-ում աշխարհագրությանը մեծ տեղ է տրվել 18-19-րդ դարերում կապված զավթողական քաղաքականության և նոր տարածքների յուրացման հետ: 20-րդ դարի սկզբին կրթության ազգային միությունը որոշում ընդունեց դպրոց մտցնել նոր ինտեգրված առարկա՝ «Սոցիալական գիտություններ», որը իր մեջ պետք է ներառեր մարդուն և հասարակությանը ուսումնասիրող բոլոր գիտությունները: Վերջինիս արդյունքում դպրոցական աշխարհագրությունը դադարեց ինքնուրույն առարկա լինելուց սկսեց իր տեղը զիջել այլ գիտություններին: Այս ամենի վերջնարդյունքը եղավ այն, որ բուհերում և քոլեջներում աշխարհագրությունը դարձավ «անցանկալի առարկա»: Աշխարհագրության ուսուցիչների պատրաստման մակարդակը կտրուկ իջավ, իսկ առարկան սկսվեց ավելի հաճախ դասավանդվել ոչ մասնագետների կողմից: Իրավիճակը փոխվեց միայն 80-ական թվականներին, երբ կատարվեցին կրթական բարեփոխումներ և աշխարհագրությունը կրկին դարձավ ինքնուրույն առարկա: Ներկայումս աշխարհագրությունը ոչ բոլոր նահանգներում է հանդիսանում

[3] Ермошкина А.С. “Школьная география и методика ее преподавания на рубеже эпох (первая половина XX в.)” Интернет журнал “Проблемы современного образования” 2013 №5, 116с

պարտադիր ուսուցման առարկա, իսկ բուհերում գնում է նեղ մասնագիտացում և առավել բարձր մակարդակի վրա են գտնվում երկրաբանությունը և քաղաքական աշխարհագրությունը: ԱՄՆ-ի մոտ 4000 բուհերից միայն 200-ը ունեն աշխարհագրության ֆակուլտետներ և միայն 90 բուհերում են պատրաստում այս ոլորտի մագիստրոսներ:[4]

Մեծ փոփոխություններ է կրել նաև բրիտանական դպրոցը: 19-րդ դարում հիմնական շեշտը դրվում էր աշխարհագրական անվանումների մեխանիկական յուրացման վրա: 20-րդ դարում մեծ ուշադրություն դարձվեց վերլուծություններին և քարտեզների կիրառությանը: 1980-ական թվականներին աշխարհագրությունը դարձավ դպրոցում պարտադիր դասավանդվող 11 առարկաներից մեկը: Ներկայումս բրիտանական դպրոցներում աշխարհագրություն ուսումնասիրում են 7-11-րդ դասարաններում, իսկ բարձր դասարաններում այն հանդս է գալիս ինտեգրված այլ առարկաների հետ, հատկապես պատմության հետ: Բրիտանիայի դպրոցական աշխարհագրության ռազմավարությունը ենթադրում է աշակերտների մոտ հետաքրքրություն առաջացնել աշխարհի և իրենց հայրենիքի նկատմամբ:[5] Բրիտանիայում բարձր մակարդակի վրա է դրված տեսական գիտելիքները գործնականում կիրառել սովորեցնելը: Դպրոցական աշխարհագրությունը բրիտանական դպրոցներում ուսուցանվում է 3 հիմնական փուլերով՝ 7-9-րդ դասարաններում: Առաջին փուլում աշակերտները ստանում են ընդհանուր աշխարհագրական գիտելիքներ, երկրորդ փուլում ուսումնասիրում են Մեծ Բրիտանիայի աշխարհագրությունը, իսկ վերջին փուլում երկրի համար ռազմավարական նշանակություն ունեցող տարածաշրջանների և երկրների աշխարհագրությունը: Չնայած այս ամենին Բրիտանիայում նույնպես աշխարհագրությունը զիջում է իր դիրքերը և կորցնում հետաքրքրությունը շրջանավարտների մոտ, այսպես եթե 1995թ-ին աշխարհագրություն դասավանդող ֆակուլտետների թիվը մոտ 47 էր, ապա 2013թ-ին այն նվազել է հասնելով 30-ի: Բրիտանական համալսարաններից աշխարհագրության դասավանդման ամենաբարձր վարկանիշը ունի Օքսֆորդի համալսարանը:[6]

---

[4] Наумова А. С. “Университетская география в современном мире” Москва 2016г
[5] “Geography. GCE AS and A Level subject content” London 2014, 16p
[6] Наумова А. С. “Университетская география в современном мире” Москва 2016г

Չնայած այն հանգամանքին, որ աշխարհագրության ռուսական դպրոցը միշտ էլ գտնվել է բարձր մակարդակի վրա, այնուամենայնիվ վերջին տասնամյակում նրա դերը կայուն նվազում է, դա է վկայում այն հանգամանքը, որ դպրոցական ավարտական քննություններում աստիճանաբար պակասում է աշխարգրություն հանձնողների թվաքանակը, մասնավորապես 2017թ-ի շրջանավարտների ընդամենը 2%-ն է ընտրել աշխարհագրություն առարկան։[7]

Ռուսաստանյան դպրոցներում աշխարհագրություն սկսում են ուսումնասիրել սկսած 6-րդ դասարանից։ 6-րդ դասարանում նրանք ստանում են ընդհանուր տեղեկություններ հետևյալ թեմաների վերաբերյալ՝ ընդհանուր տեղեկություններ «աշխարհագրություն» գիտության մասին(2ժ), «Հատակագիծ և քարտեզ» (8ժ), «Աշխարհագրական թաղանթի ոլորտները»(20ժ), «Մարդը երկրի վրա»(5ժ), ընդամենը 35դասաժամ (շաբաթական 1ժամ ծանրաբեռնվածությամբ)։[8]

7-րդ դասարանում աշակերտները ուսումնասիրում են «Մայրցամաքների և օվկիանոսների» աշխարհագրություն տարեկան 70ժամ ծանրաբեռնվածությամբ։ 8-9րդ դասարանների աշխարհագրության դասընթացը նվիրված է ՌԴ ֆիզիկական և սոցիալ-տնտեսական աշխարհագրությանը՝ յուրաքանչյուր ուսումնական տարում 70ժամ ծանրաբեռնվածությամբ։[9] 10-11-րդ դասարաններում աշխարհագրությունը չի հանդիսանում պարտադիր ուսումնական առարկա։

Ներկայումս ՌԴ Կրթության և գիտության նախարարությունը մշակում է ծրագիր «դպրոցական աշխարհագրության արդիականացման» մասին։ Մասնավորապես կատարվելու են ուղղումներ դասագրքերում , որոնք պարունակում են մեծաքանակ փաստագրական սխալներ, ուսումնառության ընթացքում կտրուկ ավելանալու են պրակտիկ դասընթացների կազմակերպումը, իսկ 10-11-րդ դասարաններում այն դառնալու է պարտադիր առարկա՝ շաբաթական 2-3 ժամ ծանրաբեռնվածությամբ, որի վերջնարդյունքը պետք է լինի աշակերտների բարձր գնահատականները, դիմորդների թվի աճը և աշխարհագրության ուսուցիչների վերադարձը մասնագիտական գործունեության բնագավառ, ովքեր շատ հաճախ զբաղված են այլ ոլորտներում։

[7] https//minobrnauki.gov.ru
[8] Ган М. П. “Рабочая учебная программа по географии” Москва 2014, 197с
[9] Гладкий Ю. Н., Николина В. В. “География. 10-11 классы. Современный мир” Москва 2012, 272с

Ճապոնիայի կրթական համակարգի վրա մեծ ազդեցություն է ունեցել իրենց ազգային հատկանիշները՝ պատվի զգացումը, կյանքի նկատմամբ լավատեսական հայացքները, կամքի ուժը։ Ճապոնիայում աշխարհագրության դասավանդումը սկսվել է 1600-ական թ-ին՝ բուդդայական և սինթոյական տաճարներում։ 1868-72թ-ին կատարած կրթական բարեփոխումների արդյունքում առարկան դպրոցներում դարձավ պարտադիր առարկա։ 1955-80թ-ին աշխարհագրության զարգացումը կապված էր տնտեսական առաջընթացի հետ, այս ընթացքում այն ձեռք բերեց մեծ կարևորություն և տեղափոխվեց նաև ավագ դպրոց։

Աշխարհագրության ուսուցման գլխավոր հիմնախնդիրները նույնն են ինչ ամբողջ ճապոնական կրթական համակարգինը, այն է բազմաթիվ քննությունները, լրացուցիչ թանկարժեք պարապմունքները, մեծաքանակ ուսումնական նյութը։ 2003թ-ին կրթության նախարարության կողմից կատարած հետազոտությունների արդյունքները ցույց տվեցին, որ ճապոնացի աշակերտների ընդամենը 42,4%-ն է ցանկանում ուսումնասիրել աշխարհագրություն, դասավանդվող նյութը լավ յուրացնում են աշակերտների ընդամենը 34,2%-ը, իսկ մոտ 33,4%-ը ընդհանրապես չի կարողանում յուրացնել նյութը։[10] Նախարարությունը դրա հիմնական պատճառը նշել է ուսուցիչների ցածր որակավորումը, պայմանավորված նրանց զբաղվածությամբ, քանզի նրանք կատարում են հսկայական արտադասարանական աշխատանք և քիչ ժամանակ են ունենում դասին նախապատրաստվելու համար։

Ճապոնիայում դպրոցական աշխարհագրության գլխավոր նպատակն է ձևավորել բազմակողմանի կրթված և նախաձեռնող անձնավորություն, սովորողների գիտակցության մեջ ձևավորել աշխարհագրական միջավայրի նկատմամբ ճիշտ աշխարհայացք։ Ճապոնիայում աշխարհագրության դասավանդման նպատակը, մյուսներից տարբերվում է նաև նրանով, որ այստեղ շեշտադրումը կատարվում է առարկայի դաստիարակչական ներուժի վրա, այլ ոչ թե խորը գիտելիքների հաղորդման վրա։ Ճապոնական դպրոցներում աշակերտները աշխարհագրական գիտելիքներ սկսում են ստանալ առաջին դասարանից։ Այսպես 1-2 դասարաններում աշակերտները ուսումնասիրում են «Գիտություն կյանքի մասին առարկան», 3-6-րդ դասարաններում՝ «Գիտություն հասարակության մասին» առարկան, 7-րդ

[10] Леонидовна И. Т. “Современное состояние и проблемы развития содержания школьного географического образования в Японии” Москва 2009, 155с.

դասարանում ուսումնասիրում են ֆիզիկական աշխարհագրություն, 8-9-րդ դասարանում ուսումնասիրում են իրենց հայրենիքի աշխարհագրությունը: 10-րդ դասարանում դասընթացը կոչվում է «Համաշխարհային տնտեսության զարգացման միտումները», 11-րդ դասարանում՝ «Գլոբալ աշխարհագրություն», իսկ 12-րդ դասարանում աշխարհագրություն չեն ուսումնասիրում:

Ճապոնիայի դպրոցական աշխարհագրության դասաժամերին մեծ տեղ է հատկացվում խմբային և գործնական աշխատանքներին: Ամեն տարի սկսած 5-րդ դասարանից, աշակերտները կատարում են համադպրոցական խմբային աշխատանքներ իրենց տարածաշրջանի մասին: Բացի այդ աշխատասիրության բարձրացման նպատակով դասապրոցեսի ընթացքում աշակերտները հաճախակի այցելում են ձեռնարկություններ, բանկեր, հյուրանոցներ, կատարում են լուսանկարահանումներ, կազմում հատակագծեր, քարտեզներ և էքսկուրսիաների երթուղիներ:

2.2 Հիմնախնդրի էությունը Հայաստանյան դպրոցում

Նախորդ գլխում քննարկված հիմնախնդիրները բնորոշ են նաև հայաստանյան կրթական համակարգին, քանի որ ոչ մի երկիր Երկրագնդի վրա ինքնամեկուսացած չի կարող գոյություն ունենալ: Յուրաքանչյուր պետություն, ինչպես և «Աշխարհագրական թաղանթի» ցանկացած բաղադրիչ, որոշակի կապերի մեջ է գտնվում այլ պետությունների հետ և ցանկացած փոփոխություն իր հետքն է թողնում երկրի և նրա ինստիտուտների վրա: Հետևաբար համաշխարհային կրթական համակարգի ճգնաժամը չէր կարող իր ազդեցությունը չթողնել ՀՀ կրթական համակարգի վրա:

Աշխարհագրության դասավանդման հիմնախնդիրներից առաջնայինը ՀՀ-ում դա կրթական չափորոշիչների անընդհատ փոփոխություններն են, որոնք շատ հաճախ ուղղակի փոխառնվում են որևէ պետությունից և փորձում ներդնել մեր կրթական համակարգ, առանց հաշվի առնելու ազգային առանձնահատկությունները, ինչի արդյունքում բնականաբար տուժում է կրթական համակարգը, իհարկե այլ երկրների կրթական համակարգերի ներդրման, նաև հաջողված փորձեր են եղել, սակայն անպայման հաշվի առնելով ազգային յուրահատկությունները: Դրա վառ օրինակը Ճապոնական կրթական համակարգն է: 1952թվ-ի ապրիլի 28-ից, երբ Ճապոնիային վերադարձվեց ինքնուրույնությունը, կատարվեցին ռեֆորմներ, կրթական համակարգ մտցվեց **բարոյական դաստիարակության դասընթացը**, ազգային կրթությանը վերադարձրեցին հոգևոր հիմքերը, դրա համար էլ Ճապոնիայի կրթական համակարգը, որի հիմքում ընկած է ամերիկյան մոդելը, **չեվրոպականացվեց և պահպանեց ազգային յուրահատկությունները**:[11]

Աշխարհագրություն առարկան ՀՀ դպրոցներում պարտադիր դասավանդվում է 6-12-րդ դասարաններում, դա աշխարհի բարձր ցուցանիշներից մեկն է հանդիսանում, սակայն դրա էֆեկտիվությունը բավականին ցածր է: Հանրակրթական դպրոցներում, ներկայիս չափորոշիչով, «աշխարհագրություն» առարկան ուսումնասիրում են 6-րդ դասարանից սկսած և դասընթացը սկսվում է «Մայրցամաքների և օվկիանոսների աշխարհագրություն» բաժնով, սակայն աշակերտները գաղափար չունեն կոորդինատային համակարգից, տեղանքում կողմնորոշվելուց, քարտեզից և մասշտաբից օգտվելու ձևերից: Դասընթացի այս հատվածը տեղափոխվել է 5-րդ

[11] Н.Н. Зверева, О.И. Муравьёва “Опыт модернизации японской системи образования” Москва 2008г

դասարանի «Բնագիտություն» առարկայի շրջանակներ, որը կարող է դասավանդվել, նաև ոչ «մասնագետ» ուսուցիչների կողմից։ Նոր չափորոշիչներով պետությունը փորձ է արել ուղղել այս սխալը, մասնավորապես վերոնշյալ բաժինները, որոնք տալիս են աշխարհագրության հիմքային գիտելիքները, արդեն իսկ տեղափոխվել են աշխարհագրության 7-րդ դասարանի (նշենք, որ դասընթացի հետ ծանոթությունը սկսվում է արդեն 7-րդ դասարանից) դասընթաց։ Սակայն ինչպես և միշտ այսպես կոչված «կրթական բարեփոխումները» լուծում են գոյություն ունեցող խնդիրների մի մասը, զուգահեռաբար ստեղծելով նորերը։ Այսպես օրինակ, առաջարկվող ծրագրի ամենամեծ թերությունը դա «Մայրցամաքների և օվկիանոսների աշխարհարության» ամբողջականության խաղտումն է, նույնիսկ՝ ծրագրից, որպես այդպիսին ընդհանրապես դուրս գալը։ Աշխարհագրությունը գիտությունների համակարգ է, որը ունի իր խոշոր բլոկները՝ Բնական, Հասարակական և Բնահասարակական։ Վերջիններիս մեջ մտնում են բազմաթիվ ճյուղեր և գիտություններ, որոնց թվում է «Մայրցամաքների և օվկիանոսների աշխարհագրությունը», այն հստակ դասվում է բնական աշխարհագրական գիտությունների շարքին։ Ծրագրով այն , ըստ էության որպես այդպիսին չի ուսումնասիրվում, այն բաժանվել և միաձուլվել է հասարակականի հետ և ըստ էության փոխարինվել է «Ռեգիոնալ աշխարհագրությամբ», որը հանդիսանում է բնա-հասարակական գիտություն, որը կոպիտ սխալ է։ Աշակերտները 7-րդ դասարանում պետք է ուսումնասիրեն օվկիանոսները «Երկրագիտության» համատեքստում և միայն 8-րդ դասարանում մայրցամաքները՝ «Ռեգիոնալ աշխարհագրության» կոնտեքստում։ Այս հանգամանքը կհանգեցնի մի շարք լուրջ պրոբլեմների։

- Աշակերտը մինչև 8-րդ դասարան գաղափար չի ունենա երկրագնդի բազմաթիվ ֆիզիկաաշխարհարական օբյեկտների (լեռներ, գետեր, լճեր, հարթավայրեր) և դրանց գտնվելու վայրի մասին։
- 7-րդ դասարանում «Համաշխարհային տնտեսությունը» և «Ռեսուրսների աշխարհագրությունը» ուսումնասիրելիս աշակերտը պետք է կարողանա ներկայացնել դրանց տեղաբաշխման առանձնահատկությունները, սակայն աշակերտը գաղափար չունի այն ֆիզիկաաշխարհագրական միավորներից, որտեղ գտնվում են այդ ռեսուրսները

- Աշակերտները 8-րդ դասարանում Քաղաքական քարտեզին զուգահեռ ստիպված կլինեն սովորել նաև բավականին բարդ ֆիզիկական քարտեզը: Գործող ծրագրով աշակերտները ֆիզիկական քարտեզը սովորում են 6-րդ դասարանում ինչը բավականին հեշտացնում է թե 8-րդ դասարանի նյութի յուրացումը, թե քաղաքական քարտեզի սովորելը:
- Խախտված է թեմաների տրամաբանական հաջորդականությունը, մասնավորապես աշակերտները կարող են մի դասին ուսումնասիրե,լ որևէ երկրի տնտեսությունը, հաջորդ դասին՝ Անտարկտիդան, իսկ մյուսին՝ Ամերիկայի քաղաքական քարտեզը, ինչը չի տեղավորվում աշխահագրության դասական կառուցվածքի մեջ:[12]

ՀՀ-ում անընդհատ նվազում է «Աշխարհագրություն» առարկայի նկատմամբ հետաքրքրությունը և դրա գլխավոր պատճառներից մեկը նրա, այսպես ասած «ոչ արդի» լինելն է: Տարեցտարի այս մասնագիտությամբ բուհերի ընդունելության թիվը պակասում է, իսկ առարկան կորցնում է իր հետաքրքրությունը ապագա ուսանողների մոտ: Մասնավորապես 2020-2021 ուսումնական տարվա ընդունելության քննություններում աշխարհագրությունից միասնական քննություն են հանձնել ընդամենը 187 շրջանավարտ (դիմորդների 1,4%-ը), իսկ 2021-2022 ուսումնական տարում՝ 127 շրջանավարտ, կամ դիմորդների ընդամենը 0,9%-ը:[13]

[12] «Աշխարհագրություն» և «Հայաստանի աշխարհագրություն» ուսումնական առարկաների հանրակրթական պետական դպրոցի օրինակելի ծրագրի նախագիծ 2020, էջ 62-79
[13] https://hraparak.am/post/3100e8127be3504f0d3060834cb1f407

Գծապատկեր 1.



Աշխարհագրություն առարկայի նկատմամբ հետաքրքրության նվազումը կապված է նաև աշակերտների մոտ առարկայի նկատմամբ սխալ պատկերացումների ձևավորմամբ: Աշխարհագրությունը դիտվում է միայն, որպես տեսական առարկա, որի հիմնական խնդիրը աշխարհի մասին տեսական գիտելիքների հաղորդումն է, և որ աշխարհագրությունը ուսումնասիրում է մայրցամաքները, օվկիանոսները և նորանոր տարածքների ու երևույթների բացահայտմամբ է զբաղված: Իհարկե եթե դիտարկենք այս տեսանկյունից, ապա ամեն ինչ ճիշտ է, սակայն քչերը կարող են աշակերտին հասցնել, որ աշխարհագրությունը, ինչպես մնացած գիտությունները ԳՏՀ դարաշրջանում վերաձևափոխման է ենթարկվել և իր առջև դրել է բոլորովին նոր, ավելի արդիական, խնդիր՝ կանխատեսել բնական և հասարակական երևույթները: Իզուր չէ, որ աշխարհի առաջատար երկրների դպրոցական դասընթացներում մեծ տեղ է հատկացվում աշխարհագրական կանխատեսմանը: Աշխարհագրական կանխատեսումը ներկայումս լայնորեն կիրառվում է այնպիսի գիտությունների կողմից, ինչպիսիք են ազգագրությունը, աշխարհաքաղաքականությունը, տնտեսագիտությունը , ուրբանիստիկան և այլն: Այս խնդրի լուծումը թույլ կտա նորից հետաքրքրություն առաջացնել առարկայի նկատմամբ և այն կդառնա ավելի պահանջված:

Առարկայի դասավանդման գործը բավականին դժվարացնում է, նաև դպրոցական դասագրքերում, քարտեզներում և ատլասներում տեղ գտած զգալի սխալները, անհամապատասխանությունները և անճշտությունները: Մեր մասնագիտությունում, բավականին կարևոր է աշխարհագրական օբյեկտների բնութագրիչ հատկությունները, որոնց սխալ, կամ երկակի ներկայացումը դժվարացնում է ուսումնական գործընթացը: Մասնավորապես տարբեր դասագրքերում և ատլասներում տարբեր են նշվում լեռների բացարձակ բարձրությունները և գետերի երկարությունները: Այս խնդիրը դիտվում է «ՀՀ կրթության, գիտության և սպորտի նախարարության կողմից» երաշխավորված տարբեր դասագրքերում և ատլասներում, մասնավորոպես Արարատ լեռան բարձրությունը «Հայաստանի աշխարհագրական ատլասում» (հեղինակ՝ Վ. Մխիթարյան Երևան 2015) նշվում է 5165մ, ինչը համապատասխանում է և դասագրքում նշված ինֆորմացիային, և ժամանակակից գիտության կողմից ընդունված ցուցանիշին, իսկ ահա «Աշխարհի ուսումնական ատլասում» (հեղինակներ՝ Ա. Հովսեփյան և Հ. Սայադյան, Երևան 2018, «Թուրքիա և Կովկաս», էջ121») նշվում է 5137մ: Բազմաթիվ են վիճարկելի հարցերը, հատկապես Հարավային օվկիանոսի գոյությունը, աշխարհի ամենաերկար գետի խնդիրը և այլն: Առանձին հիմնահարց է, նաև տեղանունների ուղղագրության և գրելաձևի խնդիրը: Մեր ատլասների և քարտեզների մեծ մասը կազմվում են հիմք ընդունելով օտարագիր քարտեզները և թարգմանության ժամանակ թարգմանիչը աշխարհագրության մասնագետ չլինելու հանգամանքով պայմանավորված ուղղակի բառացի թարգմանություն է կատարում, ինչի արդյունքում, օրինակ Բրազիլիա պետությունը կարող է դառնալ Բրազիլ (անգլերեն), կամ Բրասիլ (իսպաներեն, պորտուգալերեն): Այս խնդրի միակ լուծումը, իմ կարծիքով մեկ միասնական կառույցի ստեղծումն է, ինչպիսիք ունեն ԱՄՆ-ը, Ֆրանսիան, Մեծ Բրիտանիան, ՌԴ-ն, Ճապոնիան, Բելգիան և այլ առաջատար երկրներ (Ազգային աշխարհագրական ընկերություններ), որը կբացառի դասագրքային, քարտեզագրական սխալները և կստեղծի աշխարհագրական տվյալների միասնական բազա, որտեղ ամրագրված կլինեն աշխարհագրական օբյեկտների կարևորագույն հատկանիշները:

Ներկայումս գոյություն ունեն ինֆորմացիայի համարյա անսպառ աղբյուրներ, որոնցից սովորողը կարող է ստանալ իրեն անհրաժեշտ տեղեկատվությունը, սակայն

ուսումնական հաստատության և մանկավարժի բուն նպատակը կայանում է նրանում, որպեսզի կարողանա այդ ինֆորմացիան ճիշտ մեկնաբանի և օգնի սովորողին այն յուրացնել։ Աշխարհագրությունը մյուս առարկաներից տարբերվում է նաև նրանով, որ դասընթացում մեծ տեղ է հատկացվում գործնական ուսուցմանը, ինչը առանց հմուտ մանկավարժի կազմակերպել հնարավոր չէ, այսինքն ժամանակակից մանկավարժը գիտելիք տվող մասնագետից պետք է դառնա այն մեկնաբանող և այդ գիտելիքը գործնականում կիրառել սովորեցնող մասնագետ, նույնը վերաբերում է նաև աշխարհագրություն առարկային, սակայն աշխարհագրության դաշտային-գործնական աշխատանքները կապված են որոշակի ֆինանսական հարցերի հետ, ինչը պետությունը տարիներ շարունակ անտեսում է և լուծում չի տալիս, այնինչ դա հզոր պետության համար ընդհանրապես խնդիր չէ, հետևաբար այս խնդրի առկայությունը նույնպես հանդիսանում է նրա կարողությունների և ուժի ինդիգատոր։

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Ամփոփելով հետազոտության արդյունքները, դրանք կարող ենք ներկայացնել հետևյալ եզրակացությունների միջոցով՝

1.Ելնելով իր առջև դրված խնդիրներից տարբեր երկրներում աշխարհագրության դասավանդման նպատակը և խնդիրները տարբեր են: Այսինքն աշխարհագրությունը ինչպես մնացած առարկաները և կրթական համակարգը ամբողջությամբ, բոլոր պետություններում հանդիսանում են պետական շահերը սպասարկող «գործիք», հետևաբար եթե այն չի լուծում իր առջև դրված խնդիրները ենթարկվում է փոփոխության, իսկ դա ոչ միշտ է, որ համընկնում է մարդկանց և ազգային շահերին:

2. Աշխարհագրության արժանիքը կայանում է նրանում, որ նա հանդիսանում է աշխարհայազք ձևավորող գիտություն, նա տալիս է համակարգային պատկերացում Երկիր մոլորակի մասին՝ որպես «մարդկանց մոլորակի»: Աշխարհագրությունը ուղղված է սովորողների տրամաբանության և ինքնիրացման պոտենցիալի զարգացմանը: Այն օգնում է աշակերտների բազմակողմանի զարգացվածությանը, հասարակությունում տեղի ունեցող երևույթների և իրադարձությունների օբյեկտիվ գնահատմանը և խնդիրներին ստեղծագործ մոտենալուն: Ներկայումս պետք է գիտակցել «Աշխարհագրության» դասավանդման վերաիմաստավորման կարիքը և փոփոխության ենթարկել դասընթացի ծրագրերը, դասագրքերը և ուսուցման ձևերը՝ հիմնական շեշտը դնելով ստացած տեսական գիտելիքները գործնականում կիրառելու վրա, տվյալ պարագայում ուսուցիչը չի դիտարկվի լոկ ինֆորմացիայի տրամադրման աղբյուր:

3. Դպրոցը հանդիսանում է ոչ միայն գիտելիքի աղբյուր, այլև հասարակությանը տալիս է լիարժեք կրթված և դաստիարակված անդամի: Ժամանակակից ուսումնական հաստատություններում այս գործառույթը կամաց-կամաց դուրս է մղվում՝ իր տեղը զիջելով միայն գիտելիք տալուն, և նման անձնավորությունները ապագայում կարող են վերածվել ռոբոտացված, մարդկային որակներից և շփման կարողություններից զուրկ անձնավորությունների:

4.Ներկայումս նվազում է աշխարհագրության նկատմամբ հետաքրքրությունը, որի պատճառներից ամենագլխավորը նրա, «չպահանջված» լինելն է: Տարեցտարի այս մասնագիտությամբ բուհերի ընդունելության թիվը պակասում է, իսկ առարկան կորցնում է իր հետաքրքրությունը ապագա ուսանողների մոտ: Որպեսզի կարողանանք «վերակենդանացնել» աշխարհագրության նկատմամբ հետաքրքրությունը, անհրաժեշտ է, որ այն պետության կողմից լինի պահանջված: Եթե պետական մասշտաբով չեն կատարվում երկրաբանական, կլիմայագիտական, ջրաբանական, աշխարհաքաղաքական և այլ ուսումնասիրություններ, ապա պետական ուսումնական հաստատությունները շահագրգռված չեն նման մասնագետներ պատրաստել:

5. ՀՀ-ում կրթական համակարգի և «աշխարհագրություն» առարկայի դասավանդման խնդիրները բխում են գլոբալ կրթական ճգնաժամից, երբ դեռ չկա միասնական կրթական համակարգ, որը կբավարարի բոլորին և կկարողանա արդարացնել իրեն բոլոր երկրներում՝ թե գիտելիք տալու, թե «մարդ» դաստիարակելու առումով: Մեր հանրապետությունում կրթական համակարգի ճգնաժամի մասին են վկայում անընդհատ փոփոխության ենթարկվող ծրագրերը և չափորոշիչները, որոնք ոչ մի արդյունք չեն տալիս, բուհերի արժեզրկումը (բարձրագույն կրթության վկայականը, լոկ ապացույց է, որ դու հիմար չէս), որի արդյունքում գնալով պակասում է ուսանողների թվաքանակը, անհամեմատ հեշտ է դարձել առանց բարձրագույն կրթության աշխատանք գտնելը, մանկավարժների և ուսուցիչների արժեզրկումը և կրթական մակարդակի առավելագույն շեմի անընդհատ իջեցումը: Իմ կարծիքով այս ճգնաժամից կրթական համակարգը կկարողանա դուրս գալ, եթե չգնա բնության օրենքներին հակառակ և արհեստածին տարրերի վրա չկառուցի իր հիմքերը, կարողանա ստեղծել ազգայնահենք համակարգ, որտեղ գիտելիք տալուն և ժամանակակից աշխարհին կենսունակ մարդ մատակարարելուց բացի կկարողանա պահպանել սերունդների որակական ցուցանիշները և կենսունակության պոտենցիալը, ինչի գործում մեծ դերակատարություն կարող է ունենալ «աշխարհագրույթունը»:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

1. «Աշխարհագրություն» և «Հայաստանի աշխարհագրություն» ուսումնական առարկաների հանրակրթական պետական դպրոցի օրինակելի ծրագրի նախագիծ 2020

2. Васильевна Д. Е. “Использование современных образовательных технологий как средство интеллектуального развития учащихся на уроках географии” Курск 2021г

3. Ган М. П. “Рабочая учебная программа по географии” Москва 2014г

4. Гладкий Ю. Н., Николина В. В. “География. 10-11 классы. Современный мир” Москва 2012г

5. Ермошкина А.С. “Школьная география и методика ее преподавания на рубеже эпох (первая половина XX в.)” Интернет журнал “Проблемы современного образования” 2013 №5

6. Зверева Н.Н., Муравьёва О.И. “Опыт модернизации японской системи образования” Москва 2008г

7. Леонидовна И. Т. “Современное состояние и проблемы развития содержания школьного географического образования в Японии” Москва 2009г

8. Наумова А. С. “Университетская география в современном мире” Москва 2016г

9. Пинчук К. “Современные проблемы географического образования в школе” МПГУ Москва 2011г

10. “Geography. GCE AS and A Level subject content” London 2014

11.Համացանց ռեսուրսներ:

● «Հրապարակ» օրաթերթի պաշտոնական կայք
https://hraparak.am/

● ՌԴ «Կրթության և գիտության նախարարության» պաշտոնական կայք
https://minobrnauki.gov.ru